ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 168

ք. Երևան 03.03.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի միջև 02.12.2024թ. կնքված N ՄԱԾՁԲ-24-8-47 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2024թ. 4-րդ եռամսյակում մատուցված տպագրական ծառայությունների արդյունքում մատակարարել ապրանքներ, սակայն վերոնշյալ պայմանագրի արդյունքում 20 հատ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի առաջադիմության հաշվառման մատյան, որոնք ամբողջությամբ չեն մատակարարվել: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը) ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.02.2025թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը վերոնշյալ ապրանքի մասով:

Հաշվի առնելով, որ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ն ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ